



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունիս, 2019 թվականի № 26-Լ

«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրականացնելով «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 11-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի N 752 որոշման Հավելված N 1-ով հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալի 2019 թվականի հունիսի 25-ի թիվ 02/14.21/4413-19 գրությունը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Ընկերության լուծարման հանձնաժողովի կողմից ներկայացված Ընկերության լուծարման հաշվեկշիռը 2019 թվականի հունիսի 24-ի դրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 հունիս, 2019 թվականի

ք. Երևան